ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 08 » դեկտեմբերի 2023թ. № 228-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.02.2023Թ.-Ի ԹԻՎ 23-Ա ԵՎ 17.03.2023Թ.-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-199-Ն 26.11.2005թ. ընդունված օրենքի 23-րդ անցումային դրույթների հոդվածի պահանջներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ, 43-րդ, 57-րդ, և 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ հիմք ընդունելով Վարուժան Խաչիկի Սաքանյանի լիազորված անձ Արթուր Շավարշի Սարգսյանի դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 15.12.2022թ. թիվ ԼԴ1/1693/02/22 քաղաքացիական գործով վճիռը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0024-0002 կադաստրային ծածկագրից առանձնացված արհեստանոցի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.054333 հա:
2. Վերականգնել Վարուժան Խաչիկի Սաքանյանին պատկանող արհեստանոցի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի հողհատկացման հիմքերը 0.054333հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի սահմանված պահանջներին և ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, որը օրենքի ուժով

սեփականության իրավունքով փոխանցվում է Վարուժան Խաչիկի Սաքանյանին, պայմանով՝ հողամասը օտարելու դեպքում վճարել հողամասի կադաստրային արժեքը:

3. Հողամասի սահմանները որոշվում են «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից 04.12.2023թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 15.02.2023թ.-ի «ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 17-Ա և 17.03.2023թ.-ի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 15 -Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 50-Ա որոշումները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2023թ. դեկտեմբերի 08
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 08 » դեկտեմբերի 2023թ. № 229-Ն

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասինե ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, ,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և ,ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թվականի բյուջեն հաստատելու մասինե Լոռի Բերդ համայնքի անագանու 23.12.2022թ. թիվ 71-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվի 4212 հոդվածից 200.000 (երկու հարյուր հազար) դրամը տեղափոխել 4261 հոդվածին և ըստ եռամսյակների այդ հոդվածների գումարները սահմանել հետևյալ չափերով.
4212 հոդված մասով.
1-ին եռամսյակ – 3.500.000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ –4.750.000 (չորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 6.000.000 (վեց միլիոն) դրամ,
4-րդ եռամսյակ – 6.300.000 (վեց միլիոն երեք հարյուր հազար) դրամ,
4261 հոդված մասով.
1-ին եռամսյակ – 400.000 (չորս հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 700.000 (յոթ հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2023թ. դեկտեմբերի 08
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 13 » դեկտեմբերի 2023թ. № 230-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0047-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Ագարակ, 1-ին փողոց, թիվ 5 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Կ.տ

2023թ. դեկտեմբերի 13
գ. Լոռի Բերդ